Doi:10.54503/0135-0536-2022.2-284

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԸ ՇՈՒՇԻԻ 1906 Թ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԻ ԱԿԱՆԱՏԵՍ*

XX դարի սկիզբը Ռուսական կայսրության համար նշանավորվեց մի քանի արյունալի իրադարձություններով, որոնք ցնցեցին միապետությունը և մեծ ազդեցություն թողեցին այդ հսկա երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի վրա: Խոսքը 1904–1905 թթ. Ռուս-ճապոնական պատերազմի և 1905–1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխության, իսկ մեր՝ հայերիս համար՝ նաև 1905–1906 թթ. Անդրկովկասում հայ-թաթարական ընդհարումների մասին է: Ընդունված և անհերքելի իրողություն է, որ այդ իրադարձությունները հրահրված էին ցարական կառավարության ուղղակի ցուցումով՝ երկրամասում խառնաշփոթ առաջացնելու ու տարածաշրջանը հեղափոխական շարժումներից դերծ պահելու նպատակով, և պետական պաշտոնյաներն ամեն ինչ անում էին, որ ավելի ու ավելի բորբոքեն ատելության և բռնությունների հնոցը:

1905 թ. փետրվարին Բաքվում բռնկված ընդհարումները շատ արագ տարածվեցին Անդրկովկասի այլ քաղաքներում ու վայրերում, որտեղ հայերը և թուրքերը փոփոխական հաջողություններով երկու տարի բառացիորեն կենաց ու մահու պայքար էին մղում միմյանց դեմ: Բախումների կենտրոններից մեկը Շուշի քաղաքն էր, ուր ապրում էր հայ-թուրքական խառը բնակչություն՝ հայերի գերակշռությամբ: Առաջին զանգվածային բախումները քաղաքում սկսվել են 1905 թ. օգոստոսի 16-ին և շարունակվել մինչև նույն ամսի 22-ը[1]: Կառավարությանը իբր թե «հաջողվել է» դադարեցնել կռիվները ու «հաստատել խաղաղություն», բայց իրավիճակը պայթունավտանգ էր և հղի նոր բախումներով, որոնք շատ չեն ուշացել:

1906 թ. հուլիսի 12-ին, նախորդ բախումների սարսափները դեռ չմոռացած, քաղաքում կրկին զանգվածային բախումներ են սկսվել հայերի ու թուրքերի միջև, և քաղաքի կյանքը դարձյալ վերածվել է դժոխքի. հայերը 11 օր[2] Խանասորի Վարդանի ղեկավարությամբ հերոսական պայքար են մղել թշնամու դեմ, որն ավարտվել է հաղթանակով: Այս անգամ ևս կատարվածը լայնորեն լուսաբանվել է ժամանակի մամուլում, այդ թվում՝ Թիֆլիսի «Ալիք» օրաթերթում, որը 1906 թ. հուլիսի 30-ին և օգոստոսի 1-ին «Շուշիի

** Ներկայացվել է 25. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 05. IV. 2022 թ.:*

[1] Ա-Դո. Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, Երևան, 1907, էջ 150–158, Հ. Սիմոնյան. Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003, էջ 367–376:

[2] Ա-Դո. նշվ. աշխ., էջ 159: Աղբյուրներում, որպես լայնածավալ բախումների ավարտ, նշվում է հուլիսի 22-ը, բայց, ինչպես առաջին կռիվների դեպքում, այս անգամ էլ՝ պաշտոնապես խաղաղություն հաստատելուց հետո, առանձին բախումները դեռ շարունակվել են:

ընդհարումները» վերնագրով և Und Doch *ստորագրությամբ տպագրել է երեք թղթակցություն Շուշիից՝ գրված հուլիսի 14-ին, 17-ին և 23-ին, որոնք բավականին մանրամասն ու առարկայական, նաև զգացմունքային որոշակի գեղումներով ներկայացնում էին զինված բախումների ընթացքը և հետևանքները:* Und Doch*-ն արդեն բավականին ճանաչված գրաքննադատ, Թիֆլիսի «Վերնատուն» գրական խմբակի հիմնադիր-անդամ, իսկ 1904-ին ՀՅԴ-ին անդամագրված Նիկոլ Աղբալյանն էր, որը, բնականաբար, չէր կարող անտարբեր մնալ հասարակական-քաղաքական կարևորագույն հարցերի նկատմամբ, մանավանդ երբ դրանք վերաբերում էին հայության ֆիզիկական գոյությանը:*

Հայ-թուրքական ընդհարումներին Աղբալյանն առաջին անգամ անդրադարձել է 1905 թ. նոյեմբեր–դեկտեմբերին՝ Ֆիլիպեի (Բուլղարիա) «Ռազմիկ» թերթում տպագրելով «Ուսումնասիրություն հայ-թաթարական ընդհարումների» հոդվածը[3]*, որտեղ նա փորձել է վերլուծել 1905 թ. կատարված դեպքերը, գտնել դրանց պատճառները և անել եզրակացություններ, որոնք գուցեև օգնեին՝ ապագայում խուսափելու նման բախումներից կամ ավելի քիչ կորուստներով դուրս գալու դրանցից: Հոդվածն անավարտ է, բայց հեղինակը, լույս տեսած հատվածում, արձանագրելով, որ «նման երևույթները շատ խոր պատճառներ ունեն»*[4]*, հասցրել է անել շատ կարևոր մի եզրակացություն. «Կուլտուրական-ազգային այս մթնոլորտի բացակայությունը, որ արդյունք է ազգային-իրական բնավայր չունենալու, ցրվածության ու սակավության, ամենամեծ բացասական դերը խաղաց այս ընդհարումների ժամանակ»*[5]*: Ի տարբերություն այս հոդվածի, որը զուտ տեսական բնույթի է, երկրորդ անդրադարձը կրում է մեծ մասամբ տեղեկատվական բնույթ, որը տեղ-տեղ ընդհատվում է հեղինակի խոհերով ու գնահատականներով:*

Աղբալյանի 1906 թ. թղթակցությունները վերաբերում են Շուշիում հայ-թուրքական երկրորդ ընդհարումների ողջ ընթացքին՝ սկսած հուլիսի 12-ից մինչև հուլիսի 22–23-ը: Իրադարձությունների կենտրոնում լինելը հնարավորություն է տվել հեղինակին ականատեսի աչքով հնարավորինս ճշմարտացի նկարագրելու կատարվող դեպքերը և դրանց հիման վրա անելու ինչ-ինչ եզրահանգումներ: Առանց խորանալու մանրամասների մեջ՝ նշենք այդ երեք թղթակցությունների ուշագրավ կողմերը, որոնք էլ, մեր կարծիքով, խտացնում են դրանց արժեքն ու, որպես ականատեսի կողմից գրված հավաստի վկայություն, դարձնում Շուշիի երկրորդ ընդհարումների վերաբերյալ բացառիկ կարևոր վավերագիր[6]*:*

---

[3] *«Ռազմիկ» (Ֆիլիպե), 19. XI. 1905, 23. XI. 1905, 26. XI. 1905 (07. XII. 1905 ստորագրված է՝ Ն. Հանգույց):*

[4] *«Ռազմիկ», 23. XI. 1905:*

[5] *«Ռազմիկ», 07. XII. 1905:*

[6] *Որքան էլ զարմանալի է, հայ-թուրքական 1905–1906 թթ. ընդհարումների մասին գրված գրքերից ու հոդվածներից ոչ մեկում «Ալիք» թերթում Աղբալյանի վերը նշված երկու հրապարակումները ուղղակիորեն հիշատակված չեն: Այդուհանդերձ, Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» գրքում (գիրք II, Երևան, 2003, էջ 20) հղում է արված «Ալիքի» օգոստոսի 1-ի համարին, ու թեև նշված չէ ո՛չ հոդվածի վերնագիրը, ո՛չ էլ հեղինակի ստորագրությունը, այնուամենայնիվ, ինչպես երևում է, խոսքն Աղբալյանի երրորդ թղթակցության մասին է, որը*

1. Թուրքերը լավ զինված էին և պատրաստ կռվի, իսկ նրանց պահվածքը ինքնավստահ էր ու հանդուգն: Հենվելով իրենց թվային առավելության ու լավ զինված լինելու վրա, ինչպես նաև անթաքույց վայելելով որոշ պաշտոնյաների հովանավորությունը՝ նրանք 1906 թ. հուլիսյան մարտերից առաջ էլ, ըստ հնարավորության, նախահարձակ լինելով՝ թույլ էին տալիս բռնության բազմաթիվ դեպքեր հայերի նկատմամբ, իսկ «վերջին շաբաթները ամեն կերպ աշխատում էին հայերին կռվի հրավիրել»[7]: Մարտերի ժամանակ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում անգամ, երբ իբր թե պիտի գործեր հրադադարի ռեժիմը, նրանք շարունակում էին գնդակոծել հայերի դիրքերն ու սպանել, վիրավորել մարդկանց, իսկ զինադադարը օգտագործում էին նոր դավեր ծրագրելու համար:

2. Այս պահվածքը, ինչպես արդեն նշվել է, մեծապես պայմանավորված էր այն թողտվությամբ և նույնիսկ աջակցությամբ, որ ցուցաբերում էին ցարական պաշտոնյաները թուրքերին: Ամենամեղմ բառը, որ կարելի էր օգտագործել ցարական իշխանությունների պահվածքը բնութագրելիս, անտարբերությունն էր հայ-թուրքական ընդհարումների հանդեպ ընդհանրապես և հայերի նկատմամբ մասնավորապես: Բայց Աղբալյանի երրորդ թղթակցության մեջ անողոք իրականությունը՝ ներկայացված մահացու վտանգի ենթարկված ականատեսի կողմից, հառնում է իր ողջ գազրելիությամբ և մեկ անգամ էլ հաստատում հայ-թուրքական ընդհարումների՝ կառավարության կողմից կազմակերպված լինելն ու մշտապես հրահրվելը:

Այս երևույթն այնքան ակնհայտ էր և այնքան էր կրկնվել հայ-թուրքական ընդհարումների ողջ ընթացքում, որ այն չտեսնելն ու չհասկանալն ուղղակի հնարավոր չէր: Կառավարությունը զորք էր ուղարկում՝ իբր թե կռվող կողմերին իրարից բաժանելու և «խաղաղություն հաստատելու» համար, բայց այդ «խաղաղարար» զորքը, որի հրամանատարը, որպես կանոն, կաշառված ռուս էր, հայատյաց վրացի կամ պարզապես թուրք, շատ արագ անցնում էր թուրքերի կողմը և նոր պատուհաս դառնում հայերի համար: Եվ հայերի բախտը բերում էր, որ զորքը հրամանատարի հրամանով կամ հենց զինվորների սեփական նախաձեռնությամբ գնդակոծում կամ հրետակոծում էր նաև բոլոր չափ ու սահմաններն անցած թուրքերին: Սա արտացոլվել է նաև Աղբալյանի առաջին թղթակցության մեջ[8], բայց, բոլոր դեպքերում, հեղինակի

18–25 էջերում օգտագործվել է հեղինակի կողմից: Պետք է նաև նշել, որ ՀՅԴ «Դրոշակ» ամսաթերթի «Երկրորդ և խոշոր ընդհարումը Շուշում» հրապարակումը [1906, թ. 9 (սեպտ.), էջ 135–137], որը գրեթե բառացի համընկնում է Միքայել Վարանդյանի՝ Շուշիի երկրորդ ընդհարումների նկարագրությանը (Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն. Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 326–332), որոշ տարբերություններով՝ հավելումներով և զգացմունքային հատվածների բացակայությամբ, շատ նման է Աղբալյանի նկարագրությանը, ինչը ցույց է տալիս՝ «Դրոշակի» «կազմակերպական աղբյուրը» կարող էր օգտագործած լինել նաև «Ալիքի» հրապարակումները՝ առանց նշելու աղբյուրը:

[7] *«Ալիք» (Թիֆլիս), 30. VII. 1906:*

[8] *«Իսկույն թնդանոթ բերվեց, և յոթը հարվածով հնարավոր եղավ ցրել ավազակներին դեպի վերև» («Ալիք», 30. VII. 1906): Հետաքրքիր է այս առումով «Դրոշակի» մի վկայությունը բախումների վերաբերյալ. «Կոզակները, զինվոր-*

երեք թղթակցություններն էլ և մանավանդ վերջինը տոգորված են իշխանությունների կողմից հայ-թուրքական ընդհարումները չկանխելու, դրանց համապատասխան ձևով չարձագանքելու ու կրակի վրա յուղ լցնելու դառը գիտակցությամբ: Եվ որքան էլ զգացմունքային լինեն երրորդ թղթակցության համապատասխան հատվածները, այնուամենայնիվ, դա չի սասանում դեպքերի փաստացի, հավաստի նկարագրության հիմքերը, և դրանից թղթակցությունը չի կորցնում պատմական վավերագրի արժեքը:

3. Վերը հիշված զգացմունքայնությունը վերաբերում է գնդակների տարափի տակ փախչող հեղինակի՝ ոչ միայն քաղաքական գնահատականներին ու հարցադրումներին, այլև կռիվների ընթացքում հայ մարտիկների ցուցաբերած քաջության ու հերոսության նկարագրությանը: Եթե 1905 թ. ընդհարումների ժամանակ հայերը Շուշիում միայն պաշտպանվել են, ապա 1906-ի դեպքերի ժամանակ իրենք են հաճախ անցել հարձակողական գործողությունների՝ զսպելով հակառակորդին: Այս առումով երրորդ՝ զգացմունքային մեծ լիցքով աչքի ընկնող թղթակցության մեջ կա մի հատված, որը լիովին բացատրում է, թե ինչու թուրքերը Շուշիում չկարողացան կոտորել հայերին այնպես, ինչպես, օրինակ, Բաքվում, Գանձակում կամ Նախիջևանում: Դա հայ հերոսի էպիկական նկարագիրն է, որը հուզում է ընթերցողին ճիշտ այնպես, ինչպես իրեն՝ ականատես հեղինակին: Այդ պատվախնդիր, ազնվական նկարագրի առաջ են տեղի տվել գազանացած թուրք ոհմակներն ու նրանց աջակցող պաշտոնյաները. մի երևույթ, որը, ցավոք, այնքան հաճախ չի հանդիպել հայ նորագույն պատմության մեջ, որ հայերը կարողանային խուսափել մեծ ու փոքր դավ և ոճիրներից, ավեր ու կոտորածից և, ի վերջո, Մեծ եղեռնից: Այս տեսարանը միաժամանակ ունի քարոզ-

---

ները և օֆիցերները երբեմն մասնակցում էին կռվին՝ կառավարական թնդանոթները դեպի թուրքերը դարձնելով, առանց Գոլոշչապովի կարգադրության: Զորքերը դիրքերում աննշան աջակցություն են ցույց տվել մեզ, եթե չասենք, որ բոլորովին ցույց չեն տվել: Զորքի մի մասը թուրքաց մասումն էր և անպայման օգնում էր թուրքերին խուլիգան Զեռնյավսկու ղեկավարությամբ» [«Դրոշակ» (Ժնև), 1906, թ. 9, էջ 136]: Ա-Դոն էլ իր գրքի՝ Շուշիի երկրորդ կռիվներին վերաբերող հատվածն ավարտել է հետևյալ ընդհանրացնող դատողություններով. «Սակայն վրդովեցուցիչը այն էր, որ թուրքերը դեռ չէին ըմբռնում իրականությունը, և նրանք էլ հայերի նման միամտություն ունեին փրկություն որոնել բարեկամ պաշտոնյաների մեջ՝ պահանջ անելով փոխարքայից, որ Գոլոշչապովի փոխարեն ուղարկվեր մի այլ պաշտոնյա՝ մոռանալով, որ նույն այդ պաշտոնյաների դերը ընդհարումներ առաջ բերելու մեջ էր:

Միամիտ խեղճերը չէին տեսնում, թե ինչպես այն միջոցին, երբ զորքերի մի մասը մի քանի թնդանոթներով հարվածում էր իրենց, զորքերի մի այլ քանակ մի սպայի՝ Զեռնյաևի ղեկավարությամբ Խանին-աղջկա տներից հարվածում էր հայերին: Մի՞թե, հիրավի, մինչև վերջն էլ նրանք չկարողացան նկատել այն երկդիմի դիրքը, որ բռնած ուներ թե՛ զորքը և թե՛ յուրաքանչյուր պաշտոնյա» (Ա-Դո. նշվ. աշխ., էջ 167): [Հմմտ. Աղբալյանի գրածի հետ. «Կանգնել էի երկու դիրքերի մեջտեղ: Սարսռում էի բարկությունից: Հիրավի՞ մարդիկ այն աստիճան ապուշ են, որ չեն կարողանում ըմբռնել իշխանության դավադրությո՞ւնը: Սրանից էլ անմիտ սպանություն» («Ալիք», 01. VIII. 1906)]:

չական ու դաստիարակչական նպատակ ու գրվել է հայ երիտասարդներին կենդանի օրինակով վարակելու ակնհայտ մղումով:

Շուշիում հուլիսի 23-ին վերջապես մարտերը դադարել են, և կողմերն սկսել են հաշվել իրենց մարդկային ու նյութական կորուստները: Կարելի է պատկերացնել, թե ինչ էին զգում նրանք այդ ժամանակ, նաև՝ այն հսկայական ջանքերը, որ պետք է գործադրվեին՝ քաղաքում նախկին վիճակը գոնե մասամբ վերականգնելու համար:

1905 թ. նոյեմբեր-դեկտեմբերին գտնվելով ազգամիջյան արյունալի բախումներով լի Անդրկովկասից հեռու՝ Աղբալյանը գրել է. «Հակառակ ընդհանուր կարծիքին՝ ես համոզված եմ, որ այս ընդհարումները ոչ թե հեռացնում, այլ մոտեցնում են Կովկասի ազգերին իրար, ոչ թե կործանում ու ավերում, այլ նոր Կովկասի համար ամուր հիմքեր են փորում: Միտքը տված է մարդուն ներկան կշռելու և հեռուն դիտելու համար. ամեն տապալում դեռ մահ չէ, և ոչ ամեն ավերում՝ անապատ: Գութանը մեռցնում է արտի արոտը, բայց նոր կյանքի համար!»[9]: Հետաքրքիր է՝ ի՞նչ էր մտածում գրական, հասարակական-քաղաքական գործիչն այս երկրորդ կռիվներից հետո, երբ ամեն ինչ տեսել էր իր աչքերով ու այնքա՜ն բան էր զգացել մաշկի վրա…

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՈՒՇԻԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

I

14 յուլիսի <1906, Շուշի>

Նորից ընդհարում:

Թուրքերը Շուշում ու շրջակայքում, կռվի ամեն պատրաստություն տեսնելով, վերջին շաբաթները ամեն կերպ աշխատում էին հայերին կռվի հրաւիրել: Շուշուց դէպի արևմուտք յարձակումները տեղի էին ունենում արդէն: Թթուջրի մոտերքը, առանձնապէս Զաբուղի ձորում թուրքերը խմբւում, պատրաստում էին քաղաքի վրայ յարձակւելու: Այդ վայրերում քանի օր առաջ յարձակումներ եղան «էտապի»[10] ու պօստի[11] վրայ, ուր և սպանւեցին երկու ռուս ձիաւոր պահակներ: Սպանութեան տեղը գնացել են իհարկէ գեներալ-նահանգապէտ Գոլոշչապով թնդանօթով և թեթև զօրքով: Թուրքերը սակայն ուժեղ յարձակումով ընդդիմադրում ու յետ են մղում ռուս գեներալին, որը, խիստ վրդովւելով հանդերձ, գործը մատնում է լռութեան:

Թուրքերի կողմից յարձակումներ տեղի էին ունենում և քաղաքի հարավարևելեան շրջակայքում: Այսպէս, հէնց նորերս, Շուշիքենդ գիւղի մի այգում սպանւում է մի հայուհի և իր այգեպանը: Գործը կրկին անցաւ լռութեամբ:

Այսպէս անպատիժ մնաց թուրք խուժանի ինքնավստահութիւնը:

---

[9] *«Ռազմիկ», 23. XII. 1905:*

[10] *Պահակախմբի հսկողությամբ որևէ տեղ տարվող կալանավորների խումբ (ռուս.):*

[11] *Այստեղ՝ պահակախումբ:*

Ամսիս 12-ին՝ չորեքշաբթի, ժամը 11 1/2-ին լուր տարածուեց, որ թուրքերի սահմանում մորթուել է մի հայ: Հասանք սպանութեան վայրը: Ամբոխը գրգռուած, խմբերով գալիս էր նայելու զոհին: Եկաւ և ոստիկանը: Հազիւ էր նա սկսել արձանագրութիւն կազմել, երբ թուրքական դիմացի դիրքից յանկարծ գնդակներ տեղացին խմբուած հայերի վրայ:

Ուղիղ ժամը 12 և 40 րոպէին էր:

Զարհուրելի էր այդ վայրկեանը: Մարդիկ սկսեցին գլխիկոր փախուստ տալ, կողպուեցին խանութներ, դռներ ու պատուհաններ, և մինչև հինգ րոպէ երիտասարդ մարդիկ պատրաստ էին ժողովրդի պաշտպանութեան: Նրանք առաջ անցան՝ թուրքերի գրոհը դիմագրաւելու:

Իսկ թուրքե՞րը ... Նրանք վաղուց արդէն խանութները փակած, կազմ-պատրաստ էին իրենց դիրքերում:

Մինչև քառորդ ժամ քաղաքի զանազան կէտերում երևացին զինուորներ:

Հրացանաձգութիւնը շարունակւում էր, տեղ-տեղ բաւական ուժգին ընդհարումներով: Ղումլուղի մասում ժամը 6-ին հրդեհը արդէն բոլորել էր՝ կլանելով թուրքական ամբողջ թաղը մինչև շօսէն[12]: Այս շրջանում հայերը, չունենալով փակ դիրքեր և միաժամանակ բռնելով յարձակողական դիրք, տուին բաւական թւով վիրաւորներ:

Ժամը 8-ին երեկոյեան կռիվը բոլոր կէտերում սկսեց բորբոքուել: Երկու կողմից էլ ճգնում էին գիշերային յարձակման: Թուրքերը զինուած էին հրաշալի, պատասխանում էին միայն և միայն «դում-դում» գնդակներով[13]:

Կռիւը ամբողջ գիշեր կատաղի յամառութեամբ շարունակւում էր՝ մնալով կենտրոնացած բացառապէս թուրքական թաղերում: Հայկական մասը կատարեալ ազատ էր, այնպէս որ միւս առաւօտ նոյնիսկ շատ խանութներ բացուեցան: Այդ օրը՝ հինգշաբթի, հրացանաձգութիւնը անդադար շարունակւում էր՝ երբեմն խիստ սաստկանալով: Քաղաքացիք զբաղուած էին վիրաւորների և կուռղների հոգսերով. կանայք օգնութիւն էին հասցնում: Գալոշչապով խօսում էր հաշտութեան մասին, որովհետև թուրքերը, ակնկալած հետևանքները չը ստանալով, սպիտակ դրօշակ էին ուղարկել Ալիի ձեռքի նկարով[14], որի իսկական չը լինելը սակայն իսկոյն պարզուեց: Դրօշակ բերող

---

[12] *Խճուղի:*

[13] *Գնդակ, որը կենդանի օրգանիզմում հեշտութեամբ ծավալվում է՝ բացվում կամ տափակում՝ ըստ այդմ պատճառելով ծանր վնասվածքներ:*

[14] *Ալի իբն Աբու Թալիբը (601–661) Մուհամեդ մարգարեի զարմիկն էր ու փեսան և Արաբական խալիֆայության 4-րդ արդարադատ խալիֆան (իմամը) 656–661 թթ.: 661 թ. սպանված Իմամ Ալին շիա մահմեդականների (ինչպես Անդրկովկասի թաթարները կամ ադրբեջանցիները) կողմից համարվում է առաջին իմամը, նա և նրա սերունդները՝ Մուհամեդի օրինական իրավահաջորդները (Ալին ամուսնացած էր Մուհամեդ մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի հետ): Պատերազմների ժամանակ շիա մահմեդականներն Ալիի աջ ձեռքը պատկերում էին իրենց դրոշների վրա՝ համարելով, որ այն մի անտեսանելի զորությամբ իրենց առաջնորդում է դեպի հաղթանակ: Ըստ «Դրոշակ» ամսաթերթի՝ Շուշիում «այդ շրջանում մերոնք թուրքերից խլել էին մի դրոշակ՝ Ալիի ձեռքը վրան նկարած» («Դրոշակ», 1906, թ. 9, էջ 363): Հետագայում Մ. Վարանդյանն օգտագործել է այս հրապարակումը՝ գրելով. «Կռվի ընթացքին մերիններու ձեռքն անցավ թուր-*

կոզակները զեկուցեցին, որ թուրքերը իրենց ետևից համազարկեր էին խփում: Գոլոշչապով ետ ուղարկեց կոզակներին՝ առարկելով, որ ինքը այդ լաթի կտորին նշանակութիւն տալ չէ կարող, թող մինչև ժամը վեցը երեկոյեան պատգամաւորներ ուղարկուեն հաշտութեան պայմանները կնքելու: Լրացաւ ժամը վեցը, եօթը, ութը, բայց թուրքերից ոչ մի պատգամաւոր:

Մինչև այդ՝ լուր հասաւ, որ դիմացի Ղայբալու գիւղը պաշարուել է թուրքերով: Յիրաւի որ հրացանաձգութեան ուժեղ որոտներ էին տարածւում: Քաղաքի վերին ծայրից նկատւում էր հայ գիւղացիների դիրքը, իսկ թուրքերը, թագնւած անտառի մէջ ու ձորակում, հազիւ տեսանելի էին: Խանգարում էր մանաւանդ ամպի մի ցածր շերտ: Իսկոյն թնդանօթ բերուեց, և եօթը հարւածով հնարաւոր եղաւ ցրել աւազակներին դէպի վերև:

Մեծ ընդհարման լուրեր էին հասնում նոյնպէս Ասկերանից ու Թթու-ջրի ճանապարհից: Թուրքերը կամենում են քաղաք մտնել, սակայն ամեն կէտերում վռնդւում են մեծ կորուստներով:

Հինգշաբթի երեկոյեան՝ ժամը 8-ին, կրակը նորից սաստկացաւ: Եւ ինքնապաշտպանութեան խմբերի առաջ փախուստ տալով մանր-մունր դիրքերից՝ թուրքերը խմբուեցին «Դիկտան-Ղուրու» դիրքում:

Հրդեհը հիւսիսային կողմից նորից բորբոքուել էր՝ լուսաւորելով թուրքական ամբողջ մասը:

Այս տեղը, ուր թուրքերը նախօրօք անմատչելի դիրք էին կառուցել, անհրաժեշտ էր ոչնչացնել: Ոչնչացրին չնչին կորուստ տալով միայն:

Und Doch

Յ. Գ. Հաշտութեան բանակցութիւն սկսելով հանդերձ՝ թուրքերը չեն դադարում գնդակահարել: Նորից սպանուեցին երկու հայ, ու վիրաւորվեց մեկը, որոնք, հաշտութեանը վստահանալով, անզգուշաբար դուրս էին եկել վերին դիրքերը: Պէտք է աւելացնել, որ առհասարակ պատահական գնդակներից բաւական մարդիկ են վնասւել ու սպանուել:

Թուրքերի այս տմարդի վարմունքը հաշտութեան բանակցութեան ընթացքում գրգռեցուցիչ է: Ընդհանրապէս պէտք է կարծել, որ գիշերը նորից կռիւ կը սկսի, որովհետև թուրքերը դրսից օգնութիւն են ակնկալում:

Նոյնը

II

Շուշի, 17 յուլիսի<1906>

Ուրբաթ, մինչև շաբաթ երեկոյ զինադադար էր ընդհանրապէս, թէև երբեմն լսւում էր հրացանաձգութիւն, գլխաւորապէս թուրքերի մասից: Հայերին առաջարկւած էր հաշտութեան պայմաններ կազմել, որ հետևեալ-

---

քական մեկ դրոշ, որու վրա նկարված էր Ալիի թաթը ...» (Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 332):

ներն են. քանդել թուրքերի երկու գլխաւոր դիրքերը՝ «Դիկտան-Ղուրու» և «Գեօվհար աղի» տները և թույլ չը տալ նորոգել կամ կառուցել ապագայում նման դիրքեր: Քաղաքի լայնութեամբ՝ թուրք-հայկական սահմանի մասում բանալ մի լայն փողոց, ուր և կառուցեն բոլոր կառավարչական ու քաղաքային հիմնարկութիւնները, եթէ հնարաւոր է՝ և խանութներ երկու շարքով, մէկը հայերի, միւսը թուրքերի համար: Լուծել բօյկոտը և առևտուր սկսել միմեանց հետ գների հաւասար մեծութեամբ: Քոչը պարտաւոր է ներքևը անցնել քաղաքի մօտով՝ առանց կանգ առնելու թուրքերի մասում: Ամսիս 12-ին մորթուած հայ պահակի ընտանիքը նիւթապէս ապահովել: Արգելւում է գինուած խմբերի քաղաք ներս մտնելը: Խաղաղութեան այս պայմանները խախտող կողմը պարտաւոր է տուգանք տալ, որի չափը որոշում է խաղաղարար կոմիսիան[15]: Ընդհանրապէս չնչին պայմաններ են, ուստի և թուրքերն ընդունել են՝ առարկելով միայն առաջին կէտը դիրքերի վերաբերմամբ: Վերջնական որոշումը պէտք է կայանար կիրակի:

Այնինչ գնդակները թուրքերի թաղից շարունակում էին վզվզալ: Հայերը ամեն կերպ աշխատում էին ընդհարումը չվերսկսել: Սակայն երեկոյեան դրութիւնը լրջացաւ:

Գիշերւա ժամը 11-ին կռիւը կենտրօնական դիրքում սաստկացաւ, ապա թեթև դադարումներով շարունակւեց մինչև առաւօտեան ժամը 3-ը: Թուրքերը «Դիկտան-Ղուրու» դիրքից հանգիստ չէին տալիս հայերին: Պէտք էր մի վերջնական փորձ անել այդ դիրքը փլցնելու: Փորւեց անցք, ուժերը կրկին կենտրօնացան այդ կէտում, կռիւը հասաւ սոսկալի չափերի, և գնդակների կարկուտի տակ, ժամը 8-ին առաւօտեան, մի զարհուրելի յարձակումով քանդեցին այդ դժոխքը: Ժամը 1-ին կռիւը սկսեց հանդարտւել, որովհետև երկու կողմերի պատգամաւորները միացան խորհրդակցելու: Երեկոյեան դէմ եղաւ հաշտութեան թափոր: Թուրքերը ճառեցին մարդասիրութեան և գիտութեան մասին: Երեկոն ու գիշերն անցաւ հանգիստ, միայն Ղայբալու գիւղի վրայ կէս գիշերին յարձակում կար, որը սակայն ետ մղւեց: Այսօր՝ երկուշաբթի, նոյնպէս հանգիստ է: Գիւղերից հասնում են ընդհարման լուրեր: Թուրքերի թաղում այրւած տները 70-ից աւել կարելի է հաշւել: Հայերի կորուստը դեռ լաւ որոշած չէ, մօտաւորապէս սպանւած են 24, վիրաւորված՝ 40 հոգի:

Զար լեզուները այժմեան հաշտութիւնը համարում են ժամանակաւոր գինադադար:

Und Doch

III

Շուշի, 23 յուլիսի<1906>

Նախընթաց երկրորդ նամակում արդէն յիշել էի, որ հաշտութեան բանակցութիւնները սկսւել ու ճանձրալի տաղտկութեամբ առաջ են ընթանում: Ամբողջ ութ օր տևեցին այդ խօսակցութիւնները: Սկզբում թուրքերը առարկում էին հայերի դրած պայմանի առաջին կէտի դէմ, որ վերաբերում է «Դիկ-

[15] *Հանձնաժողով:*

տան-Ղուրու» և «Գեօվհար աղի» դիրքերի ոչնչացման: Թուրքերը բացէ ի բաց մերժել էին, ուստի հայերը վերսկսած կռւում, կիրակի առաւօտ, կրկնակի եռանդ գործ դնելով, օդը ցնդացրին «Դիկտան-Ղուրու» վիթխարի դիրքը: Թուրքերը այլևս կանգ առան: Նորից հաշտութեան դիմումներ: Եղաւ մի թեթև թափոր: Սակայն պարզ նկատւում էր, որ թուրքերը ինչ-որ դժոխային պատրաստութիւններ են տեսնում: Հայերը պնդեցին պայմանագիրը ստորագրել՝ հրաժարւելով առաջին կէտից: Թուրքերը ձգձգում էին, ապա ժողովելով՝ այժմ էլ սկսեցին առարկել ութերորդ կէտը, որը վերաբերում է կռւի սկզբին մորթւած հայ պահակի ընտանիքի ապահովութեան: Այս կէտը սկզբում ընդունել էր նոյն իսկ «բարոյական պարտականութիւն», այժմ մերժւում է, և խորհելու համար կրկին ժամանակ խնդրում: Հայերը ջնջում են և այս կէտը՝ նշանակելով ուրբաթ վերջնական ժողով: Սակայն թուրքերը նորից չը կան: Իրիկնադէմին նրանք գրում են, որ այդ օրը չը կարողացան գալ իրենց կիրակի պատճառով, սակայն վաղը՝ շաբաթ, անպայման կը գան եղբայրասպան կռւին վերջ դնելու: Ապա մի շարք բարոյա-փիլիսոփայութեամբ դատափետում են ամբողջ անցեալը և «հրաւիրում հայերին հանգիստ մնալ»:

Ջանձրացած երկար ժողովներից ու բանակցութիւններից, յոգնած ու ուժասպառ 12-օրեայ կռւից, անքուն ու ջղային՝ հայերը ցրւեցին հանգստանալու ...

Սակայն սա մի նենգ օրօր էր, մի ժանտ դաւադրութիւն, երբ քիչ մնաց, որ բոլոր հայերը սրի անցնւեն:

Նախ մի երկու խօսք անցրած վերջին օրերի մասին, երբ թէև կռիւ չը կար, սակայն ընդհանուր դրութիւնը աւելի քան սոսկալի էր: Քաղաքի թէ՛ ներքևից և թէ՛ մանաւանդ վերևից թուրքերը, մեծ խմբերի բաժանւած, ամենայն համառութեամբ ճգնում էին ներս խուժել քաղաք: Հերոսական էր հայերի դիմադրութիւնը: Ամեն կէտերից էլ թուրքերը յետ էին մղւում՝ տալով մեծ զոհեր: Քաղաքի թուրքերն էլ, հէնց դրսի այս օգնութեան վրայ յոյս դրած, շարունակում էին հայերին սպառնալ, միւս կողմից էլ՝ օյինբազութիւններով[16] հաշտութիւնը յետաձգել: Ի դէպ ասած՝ վերջը պարզւեց, որ բայց և այնպէս թուրքերը դրսից օգնութիւն են ստացել երկու խմբերով, մեկը՝ բաղկացած 100-150 հոգուց, միւսը՝ ավելի քան 580 սպառազինւածներ, դրան վերադիր և երկու թնդանօթ: Այս ամենից բացի, և որ ամենից կարևորն է, բարեսիրտ մարդիկ թուրքերին լուր էին հասցրել, որ հայերը այլևս փամփուշտ չունին: Ահա թէ ինչու թուրքերը վերջին օրերը խիստ համարձակ էին:

Այսպէս, ուրբաթ՝ ամսիս 21-ին, կեսօրից յետոյ, թուրքերը նամակով հայերին հանգստացրել էին, և հայերն էլ ցրւել էին ննջելու:

Ժամը եօթին մօտ էր, երբ զարհուրելի լուրեր բերին, թէ թուրք օֆիցէրը Գոլոշչապովի հրամանով փախած թուրքերին վերստին իրենց դիրքերում հաստատել է և հայերից պահանջում է գրաւած դիրքերը դատարկել: Կոտորածը անխուսափելի է: Հայերի համար խիստ վտանգաւոր է մանաւանդ այն պատճառով, որ թուրքերին իրենց դիրքում ամրացնելուց յետոյ թուրք սպան

[16] *Խեղկատակութիւն:*

իր զորքերով հայերի թիկունքն է անցել՝ չեշտելով, թէ մինչև կէս ժամ ձեզ ցոյց կը տամ:

Խլրտումը մեծ էր: Ժողովուրդը լցւեց փողոցները: Բողոքը խիստ էր, Գոլոշչապովը ստիպւած եղաւ իր ադիւտանտին[17] թիւրիմացութեան վայրն ուղարկել, որ կոչւում է «Աղա-Իրզի» դիրք: Գնացինք և մենք՝ հետաքրքիրների մի մեծ խումբ, բոլորն էլ անզէն: Ադիւտանտը թուրքերին թոյլ տւեց վերադառնալ իրենց նախկին դիրքը, որ անցեալ շաբաթ գրաւել էին հայերը արեան ամենաթանկ գնով: Իսկ հայերը դիրք մտան 25 քայլի վրայ շտապով կառուցած քարէ պատնէշի ետև:

Սոսկալի էր այս իրականութիւնը:

Այն րոպէին, երբ արգելւում է զէնք կրել, մանաւանդ զինւորական դրութեան շրջաններում, այն րոպէին, երբ Գոլոշչապով իբր թէ հաշտութիւն է ցանկանում, այն րոպէին, երբ հրամայւած է այլևս իրար չը կոտորել, այո՛, այդ հրամանների ժամերին իշխանութիւնը եկել, անձամբ կարգադրում է երկու կողմերին, թէ ի՛նչ դիրքեր պէտք է բռնել իրար կոտորելու համար:

Այո՛, այս իրականութիւն է, հարազատ աչքերիս առաջ կատարւած: Հայ-թուրքական ընդհարման պատմութեան մէջ հազիւ թէ սրա նման մի դէպք տեղի ունեցած լինի, որ և մի փայլուն ֆակտ[18] է իշխանութեան գարշելի ցանկութեան: Այս աստիճանի ցինի՞զմ ...

Կանգնել էի երկու դիրքերի մէջտեղ: Սարսռում էի բարկութիւնից: Ցիրավի՞ մարդիկ այն աստիճան ապուշ են, որ չեն կարողանում ըմբռնել իշխանութեան դաւադրութի՞ւնը: Սրանից էլ անմիտ սպանութիւն:

— Ինչո՞ւ չէք ցրում սրանց կամ զինաթափ անում այս մարդասպաններին:

— Անմիտ ջանք կը լինի: Այսքան գեղեցիկ սպառազինումից յետոյ նպատակայարմար է թոյլ տալ, որ իրենք իրար կոտորեն ու ի վերջոյ սպառեն ամեն զինապաշար:

Միտքս քարացաւ: Գանգիս մէջ կարծես որդեր զարգացան ու սկսեցին ուղեղս կրծել:

Թուրքերը պատրաստ էին յարձակման, իսկ հայերը շտապում էին դիրք պատրաստել ինքնապաշտպանութեան:

Ադիւտանտը ու թուրք սպան մօտեցան թուրքերին և ինչ-որ գաղտնի փսփսում էին: Յարձակումը այլևս անխուսափելի էր, այդ պարզ էր նրանց ամենաչնչին շարժման մէջ: Ես ապուշ կտրած դիտում էի թուրքերին, որ սպայի հետ խօսելով՝ հրացանները ուղղեցին մեզ: Մերոնց մէջ շարժում առաջացաւ: Այդ վայրկեանին թուրքական թաղում պայթեց սիգնալի[19] մի հրացան, և մինչ ես կամեցայ այն կողմը դիտել, նենգամիտ թուրքերը համազարկերի կարկուտ տեղացին մեզ վրայ: Հայ կուռողները դիրք մտան, անզէնները քառատ փախուստ տւին: Այս ամենը կատարւեց մի ամենաչնչին վայրկեանում:

---

[17] *Համհարզ — զինվորական ցածրաստիճան սպա, որն օգնում է բարձրաստիճան զինվորականին՝ ծառայողական հանձնարարություններ կատարելով, կամ ծառայում է շտաբում:*

[18] *Փաստ:*

[19] *Ազդանշան:*

Ես թմրած էի գիտակցութեամբ, սակայն ինստինկտի[20] ամենաուժեղ թափով թեքուեցի պատի անկիւնը: Զարհուրանքի այս վայրկեանին ես բաց աչքերով տեսայ՝ ինչպէս հէնց առաջին համազարկին գլորուեց մի վրացի զինուոր: Նրանք վեց հոգի էին և պէտք է կանգնէին երկու դիրքերի մէջտեղ, սակայն առաջին գնդակի ձայնից հինգ հոգին ժամանակ են գտնում փախչելու: Տեսնելով՝ ինչպէս վրացի զինուորը անշնչացած գետին գարկուեց՝ «ես զարմացայ» նրա վրայ, որ անզգոյշ է գտնուել, որովհետև նրա մահը բացեց իմ թմրած մտքի առաջ մահւան սարսափելի երջանկութիւնը, որին խկոյն պէտք է ենթարկուիմ և ե՛ս: Երկրորդ սոսկալի մոմենտը[21] իմ մէջ ուժգին ցանկութիւնն էր՝ խուսափել մահից. վազեցի անգիտակցօրէն, գնդակները սուլում էին աջ ու ձախ: «Մի՞թէ ես պէտք է մեռնեմ, – անցաւ մտքովս: – Ե՛ս, որ մի րոպէ առաջ ծրագրում էի, ե՛ս, որ ահա վազում եմ ...»: Եւ ուժաթափ ընկայ մի պատի տակ:

Այդ իսկ րոպէին կողքիս դուռը բացուեց, և մի պատանի՝ դժգոյն ու փոքր, հազիւ 18 տարեկան, կատարեալ սպառազինութեամբ դուրս վազեց դէպի կռիւ: Մայրը վայնասուն լացով յայտնուեց դռան մէջ: Որդին ցասկոտ ետ նայեց, հրացանը բռնեց ու ասաց.

– Եթէ խանգարես, առաջ քեզ կը սպանեմ ...

Մայրն ընկաւ ուշաթափ, իսկ պատանին սլացաւ արեան դաշտ:

Մի ցնցում անցաւ իմ ներսը, ջղերս լցուեցան, և ես, այժ ստացած, ցատկեցի պատանուն դիտելու: Եթէ առաքեալ լինէի, անշուշտ ձեռներս կը բարձրացնէի նրան խաչակնքելու: Հիացմունք տիրեց ներսս: Ես ներազդուած էի ...

Մեծ փողոցը ելայ: Այդտեղ գեներալ Գոլոշչապովին տեսայ, որ մի մեծ խումբ երեխաներ գլխին հաւաքած՝ մեծ զարճախօսութեամբ պատմում էր Պլէվնայի ճակատամարտի[22] մասին՝ մեծ բաւականութեամբ մատնացոյց անելով իր ականջների հաստ թաղանթները, որոնք դիմացել են մի այնպիսի սասան-որոտի: Դադարեցնելու կամ միջամտելու ոչ մի ցանկութիւն: Ի՞նչ հոգ, թէ երկու թշւառ ազգ կոտորւում են:

Մարդ կարող է խելագարուել, ճաթել այս դաժան իրականութեան դիմաց:

Կռիւը այլևս բորբոքւած էր: Անմխիթար էր մանաւանդ հայերի համար, որովհետև, խաղաղութեան յուսով, բոլոր կուռող ուժերը ցրուել էին, մնացել էին հազիւ մի քանի հարիւր հոգի՝ իրենց դիմացը ունենալով մի վայրենի ոյժ բաղկացած աւելի քան ութ հարիւր հոգուց: Հայ հերոսը այս գիշեր մի աւելորդ

---

[20] *Բնազդ:*

[21] *Պահ, վայրկեան:*

[22] *Նկատի ունի 1877–1878 թթ. Ռուս-թուրքական պատերազմի դրվագներից մեկը՝ բուլղարական Պլևնա (այժմ՝ Պլևեն) քաղաքի պաշարումն ու գրավումը ռուսների և ռումինների միացյալ ուժերի կողմից՝ 1877 թ. հուլիսի 20-ից դեկտեմբերի 10-ը: Պաշարված թուրքերը համառ դիմադրություն են ցույց տվել հարձակվող ռուս-ռումինական ուժերին, որոնք 3 գրոհների ընթացքում կորցրել են մոտ 35 հազար մարդ: Մեծ կորուստների պատճառով հրաժարվելով նոր հարձակումից՝ ռուս-ռումինական զորքն անցել է քաղաքի շրջափակմանը և հրանոթներից քաղաքի պարբերական հրետակոծմանը: Թուրքական զորքերի շրջափակումից դուրս գալու և յուրայիններին միանալու անհաջող փորձից հետո՝ դեկտեմբերի 10-ին, Պլևնայի կայազորը գրեթե ամբողջությամբ (ավելի քան 43 հազար մարդ՝ շուրջ 50 հազարից) անձնատուր է եղել:*

անգամ ևս ապացուցեց իր ուժգնությունը: Օրհասական կռվից յետոյ առաւոտեան թուրքերը նորից յետ մղեցին «Աղա-Իրզի» դիրքից՝ տալով անթիւ սպանուածներ:

Գոլոշչապով մնաց զարմացած: Մի՞թէ այսքան անյարմարութիւններից յետոյ կրկին հայերը յաղթեցին: Այդ լաւ նշան չէ: Նկատում է, որ հայերը պատրաստում են վրէժխնդիր լինելու թուրքերի այդ տմարդի դաւադրութեան: Ամենայն հաւանականութեամբ նրանք կաւերեն թուրքական մասը, ուստի՝ «Հրամայում եմ դադարել: Ես այլևս Գոլոշչապով չեմ, այլ գեներալ-գուբերնատոր[23]: Հրամայում եմ թնդանօթի կապել ընդդիմադրողին: Լսո՞ւմ եք»:

Եւ աւերակները սոսկացին նրա գոչիւնից: Կէսօրից յետոյ վերականգնուեց խաղաղութիւնը:

Հասաւ երեկոն: Լռութիւն է, խորին լռութիւն: Լուսինը փայլում է կամնազոյն: Կեանքը սահում է ...

Սակայն ... աւերակները՝ կանգուն, սպանուածները՝ անշունչ!!!

Վերջին կռւում հայերը տւին միայն վիրաւորներ: Ընդհանուր թիւը ամբողջ կռւի ընթացքում՝ մօտ հարիւր վիրաւորներ, մեծագոյն մասը անվնաս չանզոռուածքներ և 24 սպանուած, որի մի խոշոր մասը սպանել են իրենց տներում պատահական գնդակներից:

Թուրքերի կորուստը անհամեմատ մեծ է:

Und Doch

[23] *Ցարական Ռուսաստանում մեկ կամ մի քանի նահանգների զինվորական և վարչական իշխանությամբ օժտված նահանգապետ:*